մնահարության, փոխվել է մի բարձր սյան։ Այդ սյան գլխին պառկած է մնացել պալը, տալով ամբողջ սյունին մի հսկայական սեղանի տեսք։ Սարահարթի այս արևելյան հատվածում աղբյուրները բխում են ձորերի հատակին մոտիկ շերտերից, և գյուղացի աղջիկը ջուր բերելու համար ստիպված է շատ ներքև իջնել և ծանր կուժն ուսած՝ ձորի գրեթե զառիթափ կողով բարձրանալ։ Միայն մի տեղ ջրերը դուրս են պրծել ավելի բարձր կետից։ Դա Գորիսի գետահովտի Ակներ (հին Վարարակն) աղբյուրն է, որի ջուրը 932 թվին Տաթևի վանքի վանահայր Հակոբ եպիսկոպոսն իր կառուցած առվով տարել՝ հասցրել էր մինչև Որոտնա ձորի մեջ վանքին պատկանող Ցաքուտ կոչված հողամասը[1] այգիները ջրելու համար։ Այժմ Ակների ջուրը տարված է խողովակներով Գորիս քաղաքը։

Հակառակ Լոռի գավառին, որտեղ գյուղերը խույս են տալիս Դեբեդ գետի ձորից և զետեղված են նրա քարագլխին փռվող տափերի վրա, Բուն Զանգեզուրի գյուղերը խորը մտնում են ձորերի մեջ և կպչում նրանց կողերին։ Այսպես Որոտան գետի ձորի ձախ ափին իրար քովեքով ծվարած Հալիձորը, Շինուհայրը (Շնեհերը) և Խոտը, իսկ նրա ձախակողմյան վտակների ձորերում՝ Գորիսի գետահովտում հին Գորիս գյուղը և Վերիշենը (Երիշենը) և Քարահունջը, Խնձորեսկը և Զորաշենը (Գերուն, Գորբն, Կյորուն)— նույնանուն ձորերում, քարաշեն Խնածախը, Տեղը, Հագարու գետի վտակների ձորերում։ Այս գյուղերում տների մի խոշոր մասը ծիծեռնակի բների պես ծեփված է ձորի կողին առանց որևէ կանոնավորության՝ քմահաճ ելևէջ շավիղներով իրար հետ միացած։ Նրանցից շատերն իրենց ետևի կեսերով խրվում են մայր ժայռի մեջ, որպես քարայրներ։ Կան և ամբողջովին քարայր ներկայացնող բնակարաններ՝ քրատակներ։ Այս տեսակետով առանձնապես հետաքրքրական է Խնձորեսկը, որտեղ տները խումբ-խումբ կուչ են եկած այս կամ այն լեռնախորշում՝ մեծ մասամբ աղգակցական անցյալով իրար հետ շաղկապված։ Այդ պատճառով Խնձորեսկի թաղերն և երբեմն իրենց ամբությունները կրում են մեծ մասամբ տոհմական անուններ[2]։ Նեղ, մեկ վեր, մեկ վար, երբեմն աջ, երբեմն ձախ, մի տեղ ժայռի գլխով, մյուս տեղ հարևանի կտուրի վրայով ելնող իջնող շառավիղների ցանցը կարծես գրկել կպցրել է ձորի ժայռոտ կողին գյուղի քարե, փայտե, կավե գորշ զանգվածը, այս ու այնտեղ բացվում են քրատակների բերանները և երբեմն կանաչին են տալիս հատ-հատ ծառերի փոշոտ սաղարթները։

Նույնպիսի քրատակների կուտակումներ են Խնձորեսկից ավելի լայն ձորերում ծվարած Գորիսը՝ հին գյուղը, Տեղը, Խնածախը, որոնք համեմատաբար նոր ժամանակներում են դուրս եկել ձորերի խորքից, բայց այդ գյուղերումն էլ տեղի նեղվածությունը հարկադրել է անասնապահական շենքերը՝ գոմերը, մա-

---

[1] Տաթևի եպիսկոպոսը ջուրը գնել էր Սյունիքի տեր Փիլիպպոս իշխանից, վճարելով 12 հազար դրամ և մի պատվական գոհար ու մեծ ծախքով և աշխատությամբ առուն պեղել՝ անեծքով արգելք դնելով Հալիձորի, Խոտի, Շնեհերի և Նորի գյուղացոց՝ այդ ջրից օգտվելու։ Այդ առուն 1292 թ. նորոգվեց Հովհաննես արքեպիսկոպոսի ջանքերով։ Դրա մասին հիշեցնում է առվի կողքին բնական ժայռաբեկորի վրա փորագրված արձանագրությունը։ Այդ առուն ժողովուրդը կոչում է Քէշիշ-արխ-Քանանայի առու։ Ցաքուտը վերանվանվել է Վարդուտ։ Տե՛ս Օրբելյան Ստ., անդ, գլ. ԽԹ և Ե. Լալայեան, Սիսիան, էջ 39։

[2] Արշանց, Կատվանց, Բրղանանց (Բրղանի՝ դդում), Բոզունց ձոր (Բոզ՝ սպիտակավուն), Դաղալունց բերդը (որտեղ սպանվել է Մխիթար սպարապետը), որի դիմացն է Ջանունց բերդը։